ISSN 0135-0536

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Историко-филологический журнал

2

2012

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

2

2012

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Историко-филологический журнал

2012, 2 (190)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2012 ЕРЕВАН

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал выходит с 1958 года
Редактор-основоположник М. Г. Нерсисян

Գ լ խ ա վ ո ր խ մ բ ա գ ի ր ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո ր հ ո ւ ր դ

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ, ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ,
ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ, ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ

Գ լ խ. խ մ բ ա գ ր ի տ ե ղ ա կ ա լ,
պ ա տ ա ս խ ա ն ա տ ո ւ ք ա ր տ ո ւ ղ ա ր ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Г л а в н ы й р е д а к т о р САРГИС АРУТЮНЯН

Р е д а к ц и о н н а я к о л л е г и я

СЕН АРЕВШАТЯН, АЭЛИТА ДОЛУХАНЯН,
АЗАТ ЕГИАЗАРЯН, ГЕНРИК ИОАННИСЯН, САМВЕЛ МУРАДЯН,
ЛАВРЕНТИЙ ОВАНЕСЯН, ПАВЕЛ ЧОБАНЯН

З а м. г л а в н о г о р е д а к т о р а,
о т в е т с т в е н н ы й с е к р е т а р ь АНУШАВАН ЗАКАРЯН

Պատմաբանասիրական հանդես, 2012 Հապավումը՝ ՊԲՀ
© Историко-филологический журнал, 2012
Аббревиатура – ИФЖ

I

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՆԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՎԱՂ ԲՐՈՆԶԻ ԴԱՐՈՒՄ

ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ժամանակակից պատմագիտության մեջ քաղաքակրթության զարգացման ընթացքն առավելապես ընկալվում և նկարագրվում է մարդկային մշակույթի հարափոփոխ տիպերի բազմազանության համատեքստում: Հնագույն հասարակությունների կերտած մշակույթների, դրանց լոկալ-տարածական կամ լոկալ-ժամանակագրական տիպերի առանձնացման համար էլակետային տվյալներ են տալիս հատկապես հնագիտական սկզբնաղբյուրները: Վերջին երկու – երեք տասնամյակների ընթացքում, Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում և հատկապես Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված պեղումների շնորհիվ, հսկայական նյութ և տվյալներ են կուտակվել, որոնք հաճախ նախկինում տիրապետող տեսակետներից ու պատկերացումներից գլխովին տարբերվող իրողությունների մասին են փաստում: Նոր տվյալներն արժեքավոր են հատկապես լեռնաշխարհի հնամշակութային համակարգի ձևավորման ու զարգացման փուլերի առանձնացման, փուլերից յուրաքանչյուրին բնորոշ սոցիալ-մշակութային գործընթացների նորովի արժևորման համար: Նշված հարցերին վերաբերող քննարկումները կարևորվում են նաև այն պատճառով, որ ինչպես հայոց պատմության, այնպես էլ հայ հնագիտության մեջ ընդունված պարբերացման համակարգում մինչ օրս էլ տիրապետող են ստադիալ զարգացման՝ նախնադարյան տոհմատիրական հասարակություններից դեպի դասակարգային հասարակություններ միագիծ սխեմայի ընկալումները, որոնք ակնհայտ հակասության մեջ են նոր տվյալների հետ և ի զորու չեն արտացոլելու սոցիալական էվոլյուցիայի բազմազանությունը ո՛չ ժամանակի և ո՛չ էլ հասարակական հարափոփոխ հարաբերությունների բովանդակության մեջ: Այս պայմաններում Հայաստանի հնագույն և հին շրջանների ժամանակային ու բովանդակային պարբերացմանը վերաբերող հարցերի քննարկումը կարևոր խնդիր է դառնում:

Ժամանակակից տեսական ուսումնասիրություններում մեծ ընդունելություն է ստացել Հ. Կլասսենի առաջարկած սահմանումը, որի համաձայն՝ սոցիալական էվոլյուցիան դիտարկվում է որպես ժամանակի մեջ վերակազմավորվող գործընթաց, ինչի ընթացքում առաջանում է նախորդ ձևից որակապես տարբերվող ձև կամ կառուցվածք: Ինչպես նշում է հեղինակը. «Այդ ժամանակ էվոլյուցիոնիզմը վերածվում է նման բնույթի կառուցվածքային փոփոխությունների օրինաչափությունների որոնմանն ուղղված գիտական տեսության: Կառուցվածքային փոփոխությունն արտահայտում է

այն փաստը, որ մշակութային համակարգի մեկ կամ մի քանի ոլորտներում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք ազդում են այդ համակարգի բոլոր կողմերի (կամ մեծ մասի) վրա: Նման փոփոխությունները հանգեցնելու են համակարգի, որպես ամբողջության փոփոխությանը[1]: Կլասսենյան սահմանման կարևորագույն առավելություններից մեկը պետք է համարել այն, որ հնարավորություն է ստեղծվում հաղթահարելու էվոլյուցիոնիստական տեսություններին բնորոշ այն սահմանափակվածությունը, երբ հասարակական զարգացումների բազմազանությունը համահարթեցվում է և բացատրվում զարգացման միագիծ սխեմայով:

Սկսած 1950-ական թվականներից, երբ լայն շրջանառություն ստացավ այն թեզը, որ սոցիալական և մշակութային ինտեգրացիային համապատասխան մինչպետական հասարակությունները զարգանում էին «բարդվածության ավելացման ուղղությամբ», բարդվածության տեսությունը մեծ ընդունելության արժանացավ հնագիտական ուսումնասիրություններում: Մինչ օրս էլ հնագույն հանրությունների սոցիալական միջավայրի բարդվածության խնդիրը կարևոր տեղ է զբաղեցնում հնագիտական վերակազմություններում (մասնավորապես՝ սոցիալ-մշակութային զարգացումների պարբերացմանը նվիրված ուսումնասիրություններում)[2]: Այս մոտեցման համաձայն՝ հասարակությունը դիտարկվում է որպես որոշակի բաղադրամասերից ու ֆունկցիոնալ կառույցներից բաղկացած համակարգ: Ֆունկցիոնալ կառույցների բազմազանությունից ու քանակից կախված որոշվում է հասարակության սոցիալական կազմի բարդությունը (social complexity): Այլ կերպ ասած՝ սոցիալական բարդ կազմով հասարակության՝ կոմպլեքսային հասարակության մասին կարելի է խոսել առնվազն այն դեպքում, երբ առկա է միմյանց լրացնող գործառույթներով ֆունկցիոնալ կառույցների և հիերարխիայի մակարդակների որոշակի քանակ: Մասնագիտական գրականության մեջ հասարակության սոցիալական կազմի բարդության մասին վկայող հնագիտական դրսևորումներից հատկապես կարևորվում են մոնումենտալ ճարտարապետության առկայությունը, ֆունկցիոնալ անկախ միավորների բաժանված համայնքների, բնակատեղիների հիերարխիայի, թաղման ծեսում անհատների կարգավիճակի տարբերությունների, կիրառվող տեխնոլոգիաների աճի, արտաքին սոցիալական միջավայրի ազդեցության մասին վկայող տվյալները, ինչպես և ժողովրդագրական գործոնը, սոցիալական համակարգի սահմանները և այլն: Թվարկվածներն իրենց հերթին կարևորագույն չափանիշ են հնամշակութային միջավայրում որոշակի փոփոխություններ փաստագրելու առումով:

Հայկական լեռնաշխարհի հնագիտական տվյալները ներկայումս թույլ են տալիս մ. թ. ա.X–IX հազարամյակների սահմանագծից մինչև Վանի թագավորության շրջանն ընկած

---

[1] Х. Д ж. М. К л а с с е н. Проблемы, парадоксы и перспективы эволюционизма.– Альтернативные пути к цивилизации. Кол. Монография. Под ред. Н. Н. Крадина, А. В. Коротаева, Д. М. Бондаренко, В. А. Лынши. М., 2000, с. 6–23.

[2] K e n t V. F l a n n e r y. The Cultural Evolution of Civilizations.– “Annual Review of Ecology and Systematics”, vol. 3 (1972), pp. 399–426.

ժամանակահատվածը (Հնագույն Հայաստան)բաժանել երեք խոշոր փուլերի, որոնք միմյանցից առանձնանում են ինչպես պատմամշակութային միջավայրի առանձնահատկություններով, այնպես էլ հասարակական կեցության ողջ համակարգի արմատական փոփոխությունների մասին վկայող տվյալներով:

*Հնագույն Հայաստանի պատմության ելակետը, անկասկած, շաղկապվում է մարդկային գործունեության համար անհրաժեշտ այն կենսամիջավայրի ձևավորման հետ, որի հիմքում ընկած էր սննդամթերքի և հումքի արտադրությունն ու վերարտադրությունը: Լեռնաշխարհի նորքարի-պղնձաքարի դարաշրջանների հուշարձանները հնարավորություն են ընձեռում հետևելու երկրագործական-անասնապահական տնտեսության (վաղագույն հնամշակութային համակարգերի) ձևավորման և ծավալման ընթացքին (*մ. թ. ա. *IX* հազ.–*IV* հազ. առաջին կես՝ «վաղ երկրագործական-անասնապահական հասարակությունների» կայացման փուլ*): Մասնավորապես, մ. թ. ա. X–IX հազարամյակներից սկսած, առաջին երկրագործ-անասնապահների բնակավայրերը՝ պարփակ տարածքներ զբաղեցնող անկլավներով հանդես են գալիս լեռնաշխարհի հարավ-արևմուտքի լեռնահովիտներում և գետահովիտներում: Երկրի մնացած հատվածներում դեռևս շարունակում էր տիրապետող մնալ որսորդությունը և հավաքչությունը: Զարգացած կամ կերամիկական նեոլիթի վաղ փուլերից սկսած (մ. թ. ա. VII հազարամյակի վերջ) լեռնաշխարհի գրեթե բոլոր շրջաններն արդեն բնակեցնում էին երկրագործ-անասնապահները: Ինչպես ցույց են տալիս տարբեր շրջաններում կատարված պեղումները, զարգացած նորաքարի և պղնձաքարի վաղ երկրագործական մշակույթները միմյանցից տարբերվում են ինչպես արտադրող տնտեսության տեղային առանձնահատկություններով, այնպես էլ տափաստանաբնակ և լեռնաբնակ որսորդ-հավաքչարար նախնիներից ժառանգած մշակութային ավանդույթներով: Այս հանգամանքն իր կնիքն է թողել ինչպես երկրագործության սկզբնական տարածման աշխարհագրական և ժամանակագրական շրջանակների, այնպես էլ միմյանցից զգալիորեն տարբերվող համաժամանակյա հնագիտական մշակույթների նկարագրի վրա:*

Մ. թ. ա. IV հազ. երկրորդ կեսից մինչև մ. թ. ա. III հազ. վերջին քառորդն ընկած ժամանակահատվածի հնագիտական տվյալները վկայում են հասարակական կյանքը կարգավորող ինստիտուտների և սոցիալական մեխանիզմների սաղմնավորման ու կեցության բոլոր ոլորտները ներթափանցելու գործընթացները(«կոմպլեքսային հասարակությունների» կայացման փուլ*): Այս փուլում զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող վաղ երկրագործական-անասնապահական հասարակություններով ներկայացված հայաստանյան համապատկերը գլխովին փոխվում է, և լեռնաշխարհն այսուհետ ներկայանում է զարգացման նույն մակարդակի վրա գտնվող, համասեռ մշակութային միջավայր կերտած հասարակությամբ: Մոտավորապես մ. թ. ա. 3400 թվականներից՝ շուրջ հազար տարի ընդգրկող մշակութային միասնության այս ժամանակահատվածում (լեռնաշխարհի մեծ մասը մի քանի հարյուր տարվա ընթացքում ընդգրկվում է «կուր-արաքսյան հնամշակութային ընդհանրության» միջուկը կազմող «շենգավիթյան մշակույթի»կազմում) ավարտին հասան հնագույն Հայաստանի,*

որպես մեկ հնամշակութային մարզի կազմավորման գործընթացները: Տարածաշրջանի հնագույն հասարակությունների համար բեկումնային համարվող այս ժամանակահատվածը հիմնականում համապատասխանում է Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկասի վաղ բրոնզեդարին (մոտ. մ. թ. ա. 3400–2400/2300 թթ.):

Շուրջ մ. թ. ա. III հազարամյակի վերջին քառորդից հասարակական զարգացումներում վճռորոշ են դառնում «սոցիալական լանդշաֆտում» նկատվող փոփոխություններն ու տեղաշարժերը, որոնք ուղեկցվում են վաղագույն պետական կազմավորումների մասին վկայող բազմաբնույթ տվյալների աննախադեպ դրսևորումներով: Մ. թ. ա. XXIV–XXIII դարերից սկսած, Հայկական լեռնաշխարհի մեծ մասում, «կուր-արաքսյան ընդհանրությանը» բնորոշ հուշարձաններ չեն փաստագրվում: Տարածաշրջանի հնամշակութային «միատարրությունը» խարխլվում է: Այլևս ասպարեզում են (ինչպես համաժամանակյա, այնպես էլ իրար հաջորդող) հնագիտական նոր մշակույթներ, որոնք ավելի համեստ սահմաններում են քարտեզագրվում: Ի հայտ են գալիս աննախադեպ չափեր ունեցող և շքեղ գույքի տեսականիով առանձնացող թաղման կառույցները, լայն տարածում են ստանում պարսպապատ բերդ-շեներն ու քաղաքային բնակավայրերը: Կտրուկ փոփոխություններ են նկատվում ինչպես կենսատարածքի կազմակերպման և յուրացման ձևերում, այնպես էլ տնտեսվարման որոշակի ոլորտներում, թաղման ծեսում, պաշտամունքն ու հավատալիքները բնութագրող հատկանիշներում: Այս համատեքստը լրացնում են հասարակական և տնտեսական կենցաղում օգտագործվող գույքի (զենքեր, գործիքների, հագուկապի պարագաներ և այլն) տեսականու ու ձևերի արձանագրվող փոփոխությունները: Նախորդներից և միմյանցից հստակ տարբերվող նոր իրողությունները, նորագոյացումներն իրենց հերթին հասարակական, սոցիալական, տնտեսական, էթնո-քաղաքական արմատական տեղաշարժերի ու լայնածավալ փոփոխությունների մասին են վկայում: Հնամշակութային միջավայրի տրանսֆորմացման և հաջորդափոխության այս համապատկերը ցույց է տալիս, որ գործ ունենք լեռնաշխարհում կոմպլեքսային հասարակությունների կայացման ավարտի, վաղ պետական կազմավորումների սաղմնավորման և հետագա զարգացման մասին վկայող մի մեծ փուլի հետ, *որն ավարտվեց մ. թ. ա. IX դարում, երբ լեռնաշխարհի մեծ մասն ընդգրկվեց միասնական տերության՝ Վանի թագավորության կազմում:*

Ստորև անդրադառնալու ենք հասարակական զարգացումների կամ, այլ կերպ ասած, «սոցիալական էվոլյուցիայի» հայաստանյան համապատկերի վերակազմությանը՝ մ. թ. ա. IV հազարամյակի կեսից մինչև III հազարամյակի կեսն ընկած ժամանակահատվածի համար (վաղ բրոնզի դար): Խոսելով սոցիալական էվոլյուցիայի մասին՝ հարկ է, թերևս, ներկայացնել սոցիալական միջավայրի սաղմերը կերտող նեղլիթյան հասարակությունների մասին ձեռք բերված նորագույն որոշ տվյալներ: Վերջին երկու տասնամյակներին հարավարևելյան Թուրքիայի (Հայկական լեռնաշխարհի հարավարևմուտք և հարևան շրջաններ) մի շարք հուշարձանների (Հալլան Չեմի, Դեմիրքոյ, Չայոնու թեփե, Կաֆեր հույուք, Չինազ, Նեվալի Չորի, Գյոբեկլի թեփե)

պեղումների արդյունքները գլխավին փոխեցին արևմտյան Ասիայի նեոլիթիզացման մասին եղած պատկերացումները՝ ցույց տալով, որ մ. թ. ա. X–VIII հազարամյակներում այս տարածքն իր ինքնատիպ մշակույթով երկրագործության սաղմնավորման խոշորագույն կենտրոն է եղել[3] (այսպես կոչված՝ «Ոսկե եռանկյունին»)[4], որտեղից էլ, ըստ ամենայնի, երկրագործությունը և դրա հետ կապված նեոլիթյան հեղափոխության ընթացքում ձևավորված մշակութային մյուս նորամուծությունները տարածվել են լեռնաշխարհի հարևան շրջանները:

Նշենք նաև, որ նեոլիթյան հեղափոխություն ասելով նախնառաջ պետք է նկատի ունենալ հասարակական զարգացումների վրա հսկայական ազդեցություն թողած տեխնոլոգիական հեղափոխությունը: Ընդ որում, այս դեպքում տեխնոլոգիա ասելով նկատի ունենք ոչ այնքան աշխատանքային գործիքների պատրաստման և օգտագործման տեխնիկական հնարները, որքան երկրագործության, արհեստագործության, բնակարանաշինության, մետաղագործության և այլ ոլորտների կայացման համար անհրաժեշտ հմտությունների ողջ համակարգը ու հանրության կենսապահովման համակարգում դրանց կիրառումը: Այս ամենն իր հերթին (ի տարբերություն աշխատանքի հասարակական բաժանում չենթադրող յուրացնող կենսապահովման համակարգին բնորոշ միասեռ սոցիալական միջավայրի) պետք է հիմք դառնար հասարակության սոցիալական դիֆերանցացման համար: Արտադրող և վերարտադրող կենսապահովման համակարգի պայմաններում յուրաքանչյուր մեծ, թե փոքր հանրության ներսում օրինաչափորեն ձևավորվելու էին սոցիալական որոշակի խմբեր: Վերջիններիս քանակն ու բնույթը պայմանավորված էր արտադրող տնտեսության մեջ գերակշռող ոլորտների առանձնահատկություններով: Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններում և հարակից տարածքներում պեղված վաղագույն նեոլիթյան հուշարձանների տվյալները կասկած չեն թողնում, որ մ. թ. ա. IX–VIII հազարամյակներում արդեն այս տարածքները բնակեցնող հանրությունները ներկայանում են երկրագործների, անասնապահների, արհեստավորների, առևտրականների, «վարչարարների», պաշտամունքի սպասավորների պրոֆեսիոնալ խմբերով: «Ոսկե եռանկյունում» տեղաբաշխված էպիպալեոլիթյան/նեոլիթյան հուշարձանների ընձեռած տվյալների շնորհիվ վաղ երկրագործական հասարակությունները բոլորովին նոր համապատկերով են ներկայանում: Գոյատևման տարրական միջոցներ ունեցող փոքր գյուղակներում ապրող էգալիտար հանրությունների փոխարեն՝ Չայոնու թեփեի, Նեվալի Չորիի, Գյոբեկլի թեփեի պեղումներով վեր է հառնում սոցիալական բավականին բարդ կազմ և անչափ զարգացած մշակույթ ու տնտեսություն ունեցող մի հասարակություն: Որմնաքանդակներով և որմնապատկերներով զարդարված մոնումենտալ կառույցները, բարդ տեխնոլոգիաներով արհեստների մասնագիտացումը, միջռեգիոնալ ինտենսիվ կապերն ու առևտուրը,մետաղագործությունն

[3] Neolithic in Turkey, Ed. M. Özdogan and N. Başgelen. Istanbul, 1999.

[4] S. K. K o z l o w s k i, O. A u r e n c h e. Territories, Boundaries and Cultures in the Neolithic Near East.– “British Archaelogical Reports International Series 1362” (*այսուհետև՝* BAR), Oxford, 2005, pp. 65–86.

ասվածի լավագույն վկայությունն են[5]: Այս պրոֆեսիոնալ դիֆերենցացիան իր հերթին վկայում է հասարակության ներքին մասնագիտացման մասին, ինչը, անշուշտ, կտրուկ բարձրացնում էր շրջապատող բնական և սոցիալական միջավայրի հետ տվյալ հանրության փոխհարաբերության էֆեկտիվությունը: Ընդ որում, եթե երկրագործների, անասնապահների, արհեստավորների պրոֆեսիոնալ խմբերը «ընդգրկված» էին հասարակության ու բնական միջավայրի փոխհարաբերությունների ոլորտում, ապա առևտրականների, պաշտամունքի սպասավորների ու «վարչարարների» խմբերը կոչված էին կարգավորելու ինչպես ներհանրային, այնպես էլ հարևան հասարակությունների միջև ծագող հարաբերությունները: Ակնհայտ է նաև այն, որ, աշխատանքի հասարակական բաժանմամբ պայմանավորված, վերոհիշյալ սոցիալական խմբերի ներսում պետք է ձևավորվեին միմյանց նկատմամբ հակոտնյա սոցիալական վարքի ստերիոտիպեր, նպատակներ ու միջոցներ: Այսպիսով կարող ենք ասել, որ նոր քարի դարում տեղ գտած «նեոլիթյան հեղափոխությունը» ծնունդ տվեց աշխատանքի հասարակական բաժանումը կանխորոշող գործընթացների, որոնք իրենց ներքին էությամբ օժտված են հանրությանը տարրալուծելու ունակությամբ: Միաժամանակ կենսապահովման այս համակարգը, համեմատաբար կարճ պատմական ժամանակահատվածում, պետք է հանգեցներ ժողովրդագրական «պայթյունի» և հանրության զբաղեցրած կենսախորշի վրա դեմոգրաֆիական աննախադեպ ճնշմանը, ինչն իր հերթին պետք է ծներ այդ հանրության տրոհման-սեգմենտավորման պահանջ (ասվածի լավագույն վկայությունները, անկասկած, նեոլիթյան հեղափոխությանը հաջորդող փուլերում նստակյաց երկրագործական և քոչվոր անասնապահական հանրությունների տարանջատման, ինչպես նաև «երկրագործական սկզբնական գաղութացման» փաստերն են): Նշված հանգամանքները թույլ են տալիս շեշտելու, որ աշխատանքի բաժանմամբ համատեղ կենսագործունեությունը պարտադիր պահանջում է համախմբող՝ սոցիալ-ինտեգրացնող մեխանիզմներ: Կենսապահովման խմբային կազմակերպման ոչ արտադրական միջոցների՝ սոցիալ-ինտեգրացնող մեխանիզմների կայուն դրսևորման բազմաթիվ փաստեր են արձանագրվել նաև վերջին տարիներին պեղվող Առատաշենում, Արենի 1 քարայրում և Գոդեձորում[6],

---

[5] H. H a u p t m a n n. The Urfa Region, in Neolithic in Turkey, pp. 65–86; M. O z d o g a n. Concluding Remarks in Neolithic in Turkey, pp. 225–236; M. O z d o g a n., A. O z d o g a n. Archaeological Evidence on the Early Metallurgy at Çayonu Tepesi, in the Beginnings of Metallurgy. Bochum, 1999, pp. 13–22; R. M a d d i n, J. D. M u h l y, T. S t e c h. Early Metalworking at Çayonu, in the Beginnings of Metallurgy, pp. 37–44; S. K. K o z l o w s k i, O. A u r e n c h e. Territories, Boundaries and Cultures in the Neolithic Near East.– “BAR International Series 1362”, pp. 65–86.

[6] *Տե՛ս* R. B a d a l y a n, P. L o m b a r d, C h. C h a t a i g n e r, P. A v e t i s y a n. The Neolithic and Chalcolithic Phases in the Ararat Plain (Armenia): The View from Aratashen. - A View from the Highlands.– Archaeological Studies in Honour of Charles Burney. Ancient Near Eastern Studies. Supplement 12. Edited By A. Sagona, Peeters, 2004, pp. 399–420; Р. Б а д а л я н, П. А в е т и с я н, П. Л о м б а р д, К. Ш а т е н ь е. Поселение Араташен (неолитический памятник в Араратской равнине).– Культура древней Армении, XIII, Материалы республиканской научной сессии. Ереван, 2005, с. 34–41; G. A r e s h i a n, B. G a s p a r y a n,P. A v e t i s y a n, R. P i n h a s i, K. W i l k i n s o n, A. S m i t h,

որոնք գալիս են լրացնելու լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններում պեղված Թեփեջիկի, Արսլան Թեփե VIA-ի, Կորուջու թեփեի՝ ուրուկյան «Աշխարհ-համակարգի» մաս կազմող հասարակության մասին վկայող հայտնի տվյալները[7]: Այս դիտարկումները թույլ են տալիս ասելու, որ վաղ բրոնզին նախորդող շրջանում լեռնաշխարհում ձևավորվել էր սոցիալական այն միջավայրը, որն էլ կանխորոշեց հասարակական զարգացման ընթացքն ու առանձնահատկությունները բրոնզ-երկաթեդարյան Հայաստանում:

Ներկայումս լեռնաշխարհի մեծ մասը զբաղեցնող տարածքներից հայտնի բրոնզ - վաղ երկաթի դարերին վերագրվող հուշարձանները կարելի է խմբավորել հնագիտական համալիրների 7 մեգակոմպլեքսների շրջանակներում, որոնք մասնագիտական գրականության մեջ հաճախ բնորոշվում են որպես «հնագիտական մշակույթներ» («շենգավիթյան», «դամբանաբլուրների», «թռեղք-վանաձորյան», «սևան-արցախյան», «կարմիրբերդյան», «կարմիրվանքյան», «լճաշեն-մեծամորյան» մշակույթներ)[8]: Վերջիններս, բնութագրական հատկանիշներով զգալիորեն տարբերվելով միմյանցից, տարբերվում են նաև երկարակեցությամբ, տարածման սահմաններով, յուրաքանչյուրի զարգացման միտումների մասին վկայող ենթափուլերի քանակով: Հնագիտական հիշյալ մշակույթները բնութագրող հատկանիշների ու տվյալների համեմատական վերլուծությունները թույլ են տալիս առանձնացնելու հնագիտական իրողությունների ձևավորման և հաջորդափոխության այնպիսի դինամիկա, որն արտահայտվում է մշակութային միջավայրի ինտեգրացման ու տրանսֆորմացման խիստ

որոշակի փուլերով, որոնք իրենց հերթին վկայում են հասարակական զարգացումների նման միտումների մասին:

Լեռնաշխարհի հնամշակութային իրողություններ ինտեգրացման առաջին փուլը տեսանելի է մ. թ.ա.3400–2900 թթ.սահմաններում և շաղկապվում է շենգավիթյան մշակույթի ձևավորման ու տարածման գործընթացների հետ:Այս ժամանակահատվածը հիմ-

R. H o v s e p y a n, D. Z a r d a r y a n. The Chalcolithic of the Near East and South-eastern Europe: Discoveries and New Perspectives from the Cave Complex Areni-1, Armenia, Antiquity, 86, 2012, pp. 115–130; K. W i l k i n s o n, B. G a s p a r y a n, R. P i n h a s i, P. A v e t i s y a n, R. H o v s e p y a n, D. Z a r d a r y a n, G. A r e s h i a n, G. B a r - O z, A. S m i t h, Areni-1 Cave, Armenia: A Chalcolithic–Early Bronze Age Settlement and Ritual Site in the Southern Caucasus.– "Journal of Field Archaeology", vol. 37, 2012, №1, pp. 20–33; C h. C h a t a i g n e r, P. A v e t i s y a n, G. P a l u m b i, H.-P. U e r p m a n n, Godedzor, A Late Ubaid-Related Settlment in the Southern Caucasus, Beyond the Ubaid. Transformation and Integration in The Late Prehistoric Societies of the Middle East.– "Studies in Ancient Oriental Civilization", № 63. Chicago-Illinois, 2010, pp. 377–394.

[7] U. E s i n. Tepecik Excavations 1974.– Keban Project Publications, VII, 1982, pp. 94–118; A. P a l m i e r i. Storage and distribution at Arslantepe-Malatya in the Late Uruk Period.– Anatolia and the Ancient Near East, in Honor of T. Özgüç, ed. K. Emre, M. Mellink, B. Hrouda, N. Özgüç. Ankara, 1989, pp. 419–430; G. A l g a z e. The Uruk expansion: Cross-cultural Exchange in Early Mesopotamian Civilization.– "Current Anthropology", 1989, 30/5, pp. 571–608.

[8] *Բացառությամբ շենգավիթյան մշակույթի հուշարձանների, լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններում և Փոքր Հայքում թվարկված մյուս մշակույթներին բնորոշ տիպաբանական կազմով հուշարձաններ հայտնի չեն:*

նականում համապատասխանում է Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկասի վաղ բրոնզի դարի (մոտ. մ. թ. ա. 3400–2400/2300 թթ.) կամ «կուր-արաքսյան մշակույթի» առաջին ենթափուլին: Մ. թ. ա. III հազարամյակի առաջին քառորդի ընթացքում հյուսիս-սարևելյան Կովկասից մինչև Միջերկրական ծովի արևելյան ափերը, Եփրատի վերին հոսանքներից մինչև Զագրոսի արևելյան փեշերը տարածված հնամշակութային այս ընդհանրությունը հայտնի է «Անդրկովկասի մոխրաբլուրների և կիկլոպյան ամրոցների ստորին շերտի մշակույթ», «կուր-արաքսյան», «վաղանդրկովկասյան», «արևելաանատոլիական», Սիրիա-պաղեստինյան շրջանների համար՝ «կարմիր-սև փայլեցրած խեցեղենի», «քիրբեթկերակյան» անվանումներով[9]: Կուտակված աղբյուրագիտական հենքը թույլ է տալիս ասելու, որ հնամշակութային այս ընդհանրության սահմաններում տեսանելի են բնութագրական հատկանիշներով և տարածքային ընդգրկումներով միմյանցից հստակ առանձնացող հնագիտական մի շարք մշակույթներ: Մասնագիտական գրականության մեջ վերջիններս սովորաբար արժևորվել են որպես մեկ մշակույթի տեղային (ռեգիոնալ) կամ ժամանակագրական հատկանիշներով առանձնացող տարբերակներ[10]: Հնագիտական մշակույթների բնորոշման ներկայումս ընդունված չափորոշիչներով առաջնորդվելիս՝ ակնհայտ են դառնում տարբերությունները Կուրի ձախափնյա ավազանի, Իմերեթիայի, Կուր-Արաքս-Եփրատ միջագետքի և Ուրմիայի ավազանի, Դաղստանի, Ամուկի հովտի հուշարձանախմբերի միջև, որոնք վկայում են հնագիտական ինքնավար մշակույթների առկայության մասին: Ընդհանրական հատկանիշներով բնութագրվող հնամշակութային մարզի սահմաններում միմյանցից տարբերվող հնագիտական մշակույթների առանձնացման հարցը արդի հնագիտական գրականության մեջ հաճախ ակնարկվող և լուծման կարոտ հիմնախնդիրներից է[11]: Այս առումով հարկ է նշել հետևյալը.

---

[9] Б. А. К у ф т и н. К вопросу о ранних стадиях бронзовой культуры на территории Грузии.– «Краткие сообщения института истории материальной культуры», 1940, VIII, с. 20, *Ն ո ւ յ ն ի*՝ Урартский “колумбарий” у подошвы Арарата и куро-аракский энеолит.– «Вестник Государственного музея Грузии». XIII-B (далее – ВГМГ). Тбилиси, 1944, с. 1–144. C. A. B u r n e y. Eastern Anatolia in the Chalcolithic and Early Bronze Age.– “Anatolian Studies”, 1958, 8, pp.157–209; C. A. B u r n e y and D. M. L a n g. The Peoples of the Hills: Ancient Ararat and Caucasus, Weidenfeld and Nicolson, London. 1971; W. L a m b. The Culture of Northeast Anatolia and Its Neighbors.– “Anatolian Studies”, 1954, 4, pp. 21–32, R. J. B r a i d w o o d and L. S. B r a i d w o o d. Excavations in the Plain of Antioch, Oriental Institute Publications, LXI. Chicago, 1960; R. A m i r a n. Yanik Tepe, Shengavit and the Khirbet Kerak Ware.– “Anatolian Studies”, 1965, 15, pp. 165–167.

[10] К. Х. К у ш н а р е в а, Т. Н. Ч у б и н и ш в и л и. Древние культуры Южного Кавказа. Л., 1970, с. 62–95; Р. М. М у н ч а е в. Кавказ на заре бронзового века. М., 1975, с. 171–173; М. Г. Г а д ж и е в. Раннеземледельческая культура Северо-восточного Кавказа (эпоха энеолита и ранней бронзы). М., 1991, с. 127–150; Р. М. М у н ч а е в. Куро-аракская культура.– В кн.: Археология. Эпоха бронзы Кавказа и Средней Азии, Ранняя и средняя бронза Кавказа. М., 1994, с. 18–30; К. Х. К у ш н а р е в а. Южный Кавказ в IX–II тыс. до н. э. СПб., 1993, с. 55–71.

[11] *Տե՛ս Գ. Ե. Մ ր ե շ յ ա ն. Շենգավիթյան հնագիտական մշակույթի (քուր-արաքսյան մշակութային ամբողջության) ճարտարապետության ուսումնասիրության արդի վիճակը.– Հանրապետական հինգերորդ գիտական կոնֆերանս նվիրված Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին, Երևան, 1982, էջ 19–21,* Я. А. К и к в и д з е. Земледелие и*

Շենգավիթի պեղումներից հետո Ե. Բայբուրդյանն առանձնացրեց այդ հուշարձանին բնորոշ նյութերով Հայաստանյան համալիրները՝ դրանց տալով «շենգավիթյան մշակույթ» անվանումը[12]: Հետագայում Բ. Կուֆտինը, Անդրկովկասի ողջ տարածքում և Իգդիրում հայտնի նմանատիպ համալիրները խմբավորելով, դրանց տվեց «կուր-արաքսյան» անվանումը[13]: Ներկայումս ակնհայտ է, որ Կուր-Արաքս-Եփրատի միջագետքից հայտնի վաղբրոնզեդարյան հնագիտական իրողությունները (բնութագրական հիմնական հատկանիշներով շաղկապվում են Ե. Բայբուրդյանի առանձնացրած համալիրների հետ) պետք է վերարժևորվեն որպես մեկ առանձին հնագիտական մշակույթ[14], որը դեռևս 1930-ական թվականներից հայտնի է «շենգավիթյան մշակույթ» եզրով: Միաժամանակ Դաղստանից մինչև Միջերկրական ծովի ափերը ձգվող հնամշակութային ընդհանրության համար (ներառյալ «շենգավիթյան մշակույթը»), պետք է պահպանվի «կուր-արաքսյան» անվանումը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ ընդհանրության ձևավորման ելակետային շրջանը կամ միջուկային գոտին ամփոփված է Կուր և Արաքս գետերի ավազաններում[15]: «Կուր-արաքսյան ընդհանրության» ձևավորման սկզբնափուլի և ելակետային տարածքների մասին բազմաթիվ վարկածներ են առաջ քաշվել[16]:

земледельческий культ в древней Грузии. Тбилиси, 1987, с. 62, 66–68; М. Г. Г а д ж и е в. Северо-восточный Кавказ в эпоху раннего металла (вопросы культурной преемственности).– В кн.: Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей. Ереван, 1990, с. 66–75.

[12] *Տե՛ս* Е. Б а й б у р т я н. Последовательность древнейших культур Армении на основании археологического материала. Ереван, 2011, с. 14.

[13] Б. А. К у ф т и н. Урартский «колумбарий» у подошвы Арарата и куро-аракский энеолит.– ВГМГ, с. 85–144.

[14] *Տե՛ս Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967,* A. S a g o n a. The Caucasian Region in the Early Bronze Age.– BAR International Series, 214. Oxford, 1984; C h. B u r n e y. The Khirbet Kerak Question and the Early Trans-Caucasian Backgraund. L'urbanisation de la Palestine (l'âge du Bronze ancien.– BAR International Series, 527, (II). Oxford, 1989, pp. 331–339. *Հարկ է նշել, որ վերջին երկու հեղինակները Հարավային Վրաստանի սահմաններում առանձնացնում են Ծալկայի տարբերակը («կուրարաքսյան ընդհանրության» II փուլի համար) կամ Քվեմո Քարթլիի և Թռեղքի տարբերակները («կուրարաքսյան ընդհանրության» III փուլի համար): Ծալկայի և Թռեղքի վաղ բրոնզի հուշարձանները ակնհայտորեն նույնական են «Շենգավիթյան մշակույթի» համալիրների հետ, իսկ Արևելյան Վրաստանից դուրս՝ Քվեմո Քարթլյան տարբերակի տարածման սահմաններն առաջադրելիս, ինչ տվյալներով ու չափորոշիչներով են առաջնորդվել, մնում են անհասկանալի:*

[15] *Ներկայումս շրջանառվում է նաև Գ. Արեշյանի կողմից օգտագործվող □Դաղստանա-պաղեստինյան հնամշակութային մարզ□ անվանումը: Տե՛ս* Gr. Areshian. From Extended Families to Incipient Polities: The Trajectory of Social Complexsity in the Early Bronze Age of the Ararat Plain (Central Near Eastern Highlands).– Social orders and Social Landscapes, Edited by Popova L., Hartley Ch., and Smith A., Cambridge Scholars Publishing, 2007, pp. 26–54.

[16] C h. A. B u r n e y. Eastern Anatolia in the Chalkolithic and Early Bronze Age, Anatolian Studies, 1958, VIII, pp. 157–209; А. А. И е с с е н. Кавказ и древний Восток в IV–III тысячелетиях до н. э.– (далее – КСИА), 1963, 93, с. 3–14; Т. Н. Ч у б и н и ш в и л и. К древней истории Южного Кавказа. Тбилиси, 1971; Р. М. М у н ч а е в. Кавказ на заре бронзового века. М., 1975; Г. И. М и р ц х у л а в а. Самшвилде (Результаты раскопок 1968–1970 гг.). Тбилиси, 1975; М. В.М е н а б д е,Т.В.К и г у р а д з е.Археологическиепамятники.с.Сиони.Тбилиси,1981

Բոլոր դեպքերում անհնար է անտեսել այն փաստը, որ «կուր-արաքսյան ընդհանրության» այսօր հայտնի վաղագույն համալիրները կենտրոնացված են Կուր և Արաքս գետերի ավազաններում: Ավելին, մ. թ. ա. IV հազ. երկրորդ կեսով թվագրվող «կուր-արաքսյան» հուշարձանների առատությունն Արաքսից հյուսիս ընկած տարածքներում և, մ. թ. ա. IV հազ. վերջում միայն, դրանց ի հայտ գալը Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններում, Իրանում, Հյուսիսային Կովկասում նույնպես վկայում են, որ այս իրողությունների տարածման ելակետային շրջանները պետք է տեղադրվեն հիշյալ գետերի ավազաններում: Վերջին տարիներին Որոտան և Արփա գետերի ափերին գտնվող հնավայրերի (Գոդեձոր, Արենի-1) ուշ էնեոլիթյան շերտերից հայտնաբերված նյութերը կասկած չեն թողնում, որ այս տարածքները «կուր-արաքսյան» մշակութային համալիրի ձևավորման վաղագույն օջախներից են: Մ. թ. ա. IV հազ. վերջերից կուրարաքսյան միջագետքից և հարակից շրջաններից բնակչության հոծ զանգվածներն աստիճանական տեղաշարժերով սկսում են նոր տարածքներ յուրացնել: «Կուր-արաքսյան էքսպանսիայի» համատեքստում աննախադեպ տարածում է ստանում հատկապես շենգավիթյան մշակութային համալիրը: Հետևելով «կուր-արաքսյան էքսպանսիայի» աշխարհագրությանը և նկատի ունենալով յուրաքանչյուր նոր շրջանում մշակութային այս համալիրի հանդես գալու առանձնահատկությունները՝ կարելի է մասնավորել հետևյալը: Էնեոլիթյան տարբեր ավանդություններով և միմյանցից հարյուրավոր կիլոմետրեր հեռավորության վրա գտնվող շրջաններում ի հայտ եկող կուր-արաքսյան առաջին փուլի համալիրները (հատկապես խեցանոթներն իրենց ձևերով և զարդամոտիվներով, թաղման կառույցները, ծիսական օջախները, թրծակավե արձանիկները, տարածքի յուրացման և բնակեցման առանձնահատկությունները, մետաղյա գործիքները և զենքերը) խիստ միօրինակ են: Այս հանգամանքը, թույլ է տալիս խոսելու լեռնաշխարհում ընթացող ինտեգրացիոն գործընթացների մասին: Լեռնաշխարհի հյուսիսային, կենտրոնական և արևելյան շրջանները մ. թ. ա. IV/III հազարամյակների սահմանագլխից սկսած ներկայանում են բացառապես կուր-արաքսյան ընդհանրությանը բնորոշ իրողություններով: Միաժամանակ, Խարբերդի, Մալաթիայի շրջանի հուշարձաններում կուր-արաքսյան իրողությունների ներթափանցման և հետագայում գերիշխող դառնալու կարգընթացը հուշում է, որ, ըստ ամենայնի վերաբնակիչներն ասիմիլացնելով տեղի բնակչությանը, հասարակական և տնտեսական կենցաղում«տեղական» տարրեր որդեգրելով ձևավորում են նոր դիմագծով մշակույթ,որը,այնուհանդերձ,

(на груз. яз. с русским резюме); К. Х. К у ш н а р е в а. Южный Кавказ в IX–II тыс. до н. э. СПб., 1993, с. 29; T. K i g u r a d z e. The Chalcolithic-Early Bronze Age Transition in the Eastern Caucasus, Chronologies des Pays du Caucase et de l'Euphrate aux IV–III Millenaires, Ed. C. Marro, H. Hauptmann. Paris, 2000, p. 321–328; T. K i g u r a d z e, A. S a g o n a. On the Origins of the Kura-Araxes Cultural Complex. Archaeology in the Borderlands: Investigations in Caucasia and Beyond. Edited by A. Smith & K. Rubinson. Los Angeles, 2003, pp. 38–94; T. K i g u r a d z e, M. M e n a b d e. The Neolithic of Georgia, A View from the Highlands. Archaeological Studies in honour of C. Burney, Ed. A. Sagona.– "Ancient Near Eastern Studies", Supplement 12, 2004, pp. 345–398.

հիմնական հատկանիշներով մնում է նույնական ելակետային տարածքը բնակեցնողների մշակույթի հետ:

Շենգավիթյան մշակույթի հուշարձանները սփռված են ինչպես ցածրադիր հովիտներում և դաշտավայրերում, այնպես էլ նախալեռնային ու բարձր լեռնային շրջաններում: Բազմաթիվ հուշարձանների շարքում առանձնանում են կենտրոնի դեր ունեցող խոշոր բնակավայրերը, շրջապատված անհամեմատ մանր՝ արբանյակ բնակատեղիներով: Տարածքի բնակեցման և յուրացման այս համակարգը գերիշխող էր շենգավիթյան հասարակության գոյատևման ողջ ընթացքում: Շենգավիթյան մշակույթի կրողներն իրենց հանգուցյալներին թաղում էին ինչպես բնակատեղիների սահմաններում, այնպես էլ դրանց անմիջական հարևանությամբ առանձնացված գերեզմանոցներում՝ դամբարանադաշտերում: Հատկանշական է, որ փաստագրվել են նաև բնակատեղիների հետ չշաղկապվող, մեկուսի դամբարանադաշտեր: Նշված փաստերը թույլ են տալիս ասելու, որ «շենգավիթյան հասարակությունը» բավականին բարդ սոցիալական կազմ է ունեցել և նստակյաց բնակչության հարևանությամբ ապրել են նաև մշտական բնակության վայր չունեցող, մոբիլ՝ տեղից տեղ պարբերաբար շարժվող համայնքներ: Այնուհանդերձ, կասկածից վեր է, որ շենգավիթյան հասարակության տնտեսության հիմքը, ոռոգվող երկրագործությունն ու արոտային անասնապահությունն էր: Բարձր լեռնային գոտիներում պեղված հուշարձանները ցույց են տալիս, որ ծովի մակերևույթից 2000 և ավելի մետր բարձրության վրա ապրող համայնքները զբաղվել են երկրագործությամբ: Տարբեր հուշարձաններում պեղված արհեստանոցները, զենքերի, գործիքների, զարդերի պատրաստման համար օգտագործված կաղապարների մեծ քանակը մետաղամշակության զարգացման աննախադեպ մակարդակի լավագույն վկայություններն են: Հնագույն հայաստանաբնակների տնտեսության մեջ կարևորագույն տեղ էր զբաղեցնում առևտուրը: Առկա տվյալները թույլ են տալիս ասելու, որ վանակատի, պղնձի հարուստ պաշարներ ունեցող շրջաններից հումք է արտահանվել ինչպես Առաջավոր Ասիայի, այնպես էլ Կովկասից հյուսիս ընկած, զգալի հեռավորության վրա գտնվող տարբեր շրջաններ: Ավելին, լեռնաշխարհի հարավարևմտյան և հարավարևելյան շրջաններում շենգավիթյան մշակույթի կրողները վերահսկում էին միջազգային տարանցիկ առևտրի կարևորագույն ուղիները, ինչն էլ նպաստեց, որ այս շրջաններում սկսեցին ձևավորվել քաղաքային մշակույթին բնորոշ հատկանիշներով խոշոր բնակավայրեր:

Կուր-արաքսյան ընդհանրության և հատկապես շենգավիթյան մշակույթի կրողների տարածման բնույթը և աշխարհագրությունը թույլ են տալիս խոսելու նաև Առաջավոր Ասիայի հասարակական զարգացումներում նկատվող նոր միտումների մասին:Բանն այն է,որ մ.թ.ա.VI հազարամյակից սկսած Առաջավոր Ասիայում հստակ նկատելի են մեկը մյուսին հաջորդող«մշակութային էքսպանսիաների»ալիքներ,որի ընթացքում հնագիտական այս կամ այն մշակույթը աստիճանաբար սփռվում է հսկայական տարածքների վրա:«Մշակութային էքսպանսիաների»առաջին տոն տվողները Հյուսիսային Միջագետ-

քը և Հյուսիսային Սիրիան բնակեցնող հասարակություններն են (խալաֆյան մշակույթ), որոնք, կարծես թե, իրենց հսկողության տակ են առնում հումքի պաշարներով հարուստ և տարանցիկ առևտրի հիմնական ճանապարհների խաչուղի հանդիսացող «Բարեբեր մահիկի» կենտրոնական շրջանները: Մ. թ. ա. V հազարամյակի երկրորդ կեսից մինչև IV հազարամյակի վերջն ընդգրկող ժամանակահատվածում Առաջավոր Ասիայի պատմահնագիտական համայնապատկերն առավելապես բնորոշվում է Միջագետքի հարավի մշակութային իրողությունների՝ դեպի հյուսիս տարածմամբ: Զուտ ուբեյդյան նկարագիր ունեցող կամ այս մշակույթի ածանցուկներով հարուստ բնակատեղիները սփռվում են Իրանի հյուսիսարևմուտքից մինչև Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններն ու Հյուսիսային Սիրիա: Մ. թ. ա. IV հազ. երրորդ քառորդից սկսած գրեթե նույն պատկերն ենք տեսնում «ուրուկյան էքսպանսիայի» փուլում: Երկու դեպքում էլ ակնառու են միջագետքյան հասարակությունների ծավալապաշտության միտումները. վերահսկել այն տարածքները, որտեղով անցնում են միջազգային տարանցիկ ուղիները, որտեղ կենտրոնացված են միջագետքյան հասարակությունների համար կենսական նշանակություն ունեցող հումքի աղբյուրները: Մ. թ. ա. IV–III հազարամյակների սահմանագծից սկսած «մշակութային էքսպանսիայի» մեկնակետն արդեն «Բարեբեր մահիկից» հյուսիս ընկած՝ շենգավիթյան հասարակության զբաղեցրած տարածքներն են: Նշված ժամանակահատվածից սկսած, ավելի քան 500 տարի, Առաջավոր Ասիայի տարանցիկ առևտրի կարևորագույն ուղիները, հանքագոտիները հայտնվում են շենգավիթյան հասարակության վերհսկողության ներքո[17]:

Մ. թ. ա. XXVIII–XXVI/XXV դարերն ընդգրկող ժամանակահատվածում տարածաշրջանին բնորոշ են դառնում տրանսֆորմացման գործընթացները, ինչի հետևանքով ձևավորվում են կուր - արաքսյան ընդհանրության մաս կազմող հնագիտական մի շարք մշակույթներ: Այս փուլում կուր - արաքսյան էքսպանսիայի ալիքն արդեն տեսանելի է լեռնաշխարհի սահմաններից դուրս՝ դեպի Սիրիայի հյուսիսարևմտյան շրջաններ, իսկ այնտեղից էլ դեպի Պաղեստին: Նշված ժամանակահատվածում առավելագույն տարածում են ստանում հատկապես Արարատյան դաշտին և հարևան շրջաններին բնորոշ (շենգավիթյան մշակույթ) իրողությունները[18]: Շենգավիթյան հասարակությանը բնորոշ իրողությունների տարածման այս նոր ալիքի

[17] U. E s i n. Tepecik-1974.– AS, 1975, XXV, pp. 46–49; *Նույնի*՝ Tülintepe excavations 1972, Keban Projekt Publications, V. Ankara, 1976, pp. 147–163; *Նույնի*՝ An Early Trading Center in Eastern Anatolia.– Anatolia and the Ancient Near East, in Honor of T. ՃzgՖջ, ed. K. Emre, M. Mellink, B. Hrouda, N. ՃzgՖջ. Ankara, 1989, pp. 135–141; *Նույնի*՝ Die Tempel von Değirmentepe während der chalkolithischen Obed periode.– “Rencontre Assyriologique Internationale”, XXXIV. Ankara, 1998, pp. 659–676; M. F r a n g i p a n e. Models of Urbanization in Eastern Anatolia, Housing and Settlement in Anatolia. A Historical Perspective, ed. Yönetmeni Y. Istanbul, 1996, pp. 60–69, К. К. Л а м б е р г - К а р л о в с к и. Модели взаимодействия в III тыс. до н. э.; от Месопотамии до долины Инда.– «Вестник древней истории». М., 1990, с. 6–8, G. A l g a z e. The Uruk World System, The University of Chicago Press. Chicago-London, 1993.

[18] *Տե՛ս* A. S a g o n a. The Caucasian Region in the Early Bronze Age. C h. B u r n e y. The Khirbet Kerak Question and the Early Trans-Caucasian Background *աշխատանքներում տեղ գտած քարտեզները:*

հիմնական առանձնահատկություններից մեկն էլ, թերևս, դրա էստաֆետային բնույթն է: Նոր տարածքներում արմատավորվելուց հետո բնակչության զգալի հատվածները մի նոր արտագաղթ են սկսում՝ սփռվելով արդեն միջուկային գոտուց զգալի հեռավորության վրա գտնվող շրջաններում: Մասնավորապես, հյուսիսային Սիրիայի և Պաղեստինի տարածքներից հայտնի «քիրբեթ-կերակյան մշակույթի» ձևավորման մեջ զգալի է Խարբերդ-Մալաթիային բնորոշ մշակութային համալիրի դերը: Սակայն «քիրբեթ-կերակյան» իրողությունների հիբրիդային բնույթն ու գերիշխող տեղական մշակութային միջավայրում գոյատևման առանձնահատկությունները (հատկապես Պաղեստինում), կարծես թե, հուշում են էլակետային տարածքների հետ ամուր կապեր ունեցող «սփյուռքի», քան թե էթնոմշակութային էքսպանսիայի մասին: Այս փուլում լեռնաշխարհի սահմաններում տեսանելի են հասարակական զարգացումների տեմպերով միմյանցից զգալիորեն տարբերվող երկու՝ հարավային և հյուսիսային ենթագոտիներ, որոնցից հատկապես առաջինում փաստագրվում են ուրբանիստական զարգացումներին բնորոշ հատկանիշներ:

Հայկական լեռնաշխարհի սահմաններում ուրբանիստական զարգացումների հետ կապվող առաջին փաստերը տեսանելի են ամրոցաշինության ոլորտում: Տաճարի նման ամրոցը նույնպես (որպես կենսապահովման խմբային կազմակերպման ոչարտադրական միջոց) հանդես գալու առաջին պահից սոցիալ-ինտեգրացնող ֆունկցիայի կրող է՝ հանրության միասնականությունն ապահովող կարևորագույն գործոն: Պարսպապատ առաջին բնակատեղիներն լեռնաշխարհում հանդես են գալիս մ. թ. ա. IV հազարամյակի վերջ - III հազարամյակի առաջին քառորդից[19]: Դրանց մի մասի, ինչպես և շենգավիթյան մշակույթի համեմատաբար խոշոր բնակավայրերի համար հաճախ օգտագործում են «քաղաք» հասկացությունը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ անկախ այն բանից, թե հինարևելյան քաղաքակրթության մաս կազմող հասարակությունների սոցիալական կազմի, հասարակական հարաբերությունների մասին ինչ տեսակետներ ու կարծիքներ են դրվել շրջանառության մեջ, այդ քաղաքակրթության ձևավորման գործում առաջնային և վճռորոշ դերակատարությունն աներկբա վերապահվել է քաղաքներին: Միաժամանակ խնդիրն արծարծող մասնագետների մեծամասնության կարծիքով տարբեր ժամանակափուլերում, պատմական տարբեր պայմաններում «քաղաք» հասկացությունը փոխում է իր բովանդակությունը, ինչն էլ բացառում է վերջինիս համապարփակ բնութագրության հնարավորությունը: Դեռևս Մ. Վեբերը նշում էր, որ քաղաքի սահմանումներն իրենց բնույթով կարող են խիստ տարբեր լինել՝

---

[19] T. B u r t o n - B r o w n. Excavations in Azerbaidjan 1948, London, 1951, pp. 15–25; C h. B u r n e y. Excavation at Yanik Tepe, North-West Iran, Iraq . 1961, 23, pp. 138–153; *Ն ո ւ յ ն ի՝* The Excavation at Yanik Tepe. Azerbaidjan 1961: Second Preliminary Report. Iraq , 1962, 24, pp. 134–152; *Ն ո ւ յ ն ի՝* The Excavation at Yanik Tepe. Azerbaidjan. 1962: Third Preliminary Report. Iraq, 1964, 26, pp. 54–62; *Գ. Ա ր ե շ յ ա ն, Հ. Մ ի մ ո ն յ ա ն, Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Հայագիտական կենտրոնի 1976 թվականի դաշտային հնագիտական աշխատանքները.– «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, -3, էջ 267, Ս. Ս ա ր դ ա ր յ ա ն. Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 171, Է. Խ ա ն զ ա դ յ ա ն. Գառնի IV, 1949–1966 թթ. պեղումների արդյունքները, Երևան, 1969, էջ 7:*

շեշտելով տնտեսական, վարչաքաղաքական, իրավական, ժողովրդագրական և բազմաթիվ այլ գործոնների դերն այս խնդրում[20]: Կասկածից վեր է, որ պետություն, մասնավոր սեփականություն, կրոն և այլ ունիվերսալ պատմական կատեգորիաների նման քաղաքն անցել է զարգացման երկարատև ճանապարհ: Բնականաբար, այդ ընթացքում անխուսափելիորեն պետք է հանդես գային միջանկյալ կամ հիբրիդային բնակավայրերի այնպիսի ձևեր, որոնք իրենց մեջ միավորելու էին ինչպես քաղաքին, այնպես էլ հնադարյան «ոչ քաղաքին» բնորոշ հատկանիշները[21]: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ սովորաբար «քաղաքից» բացի, օգտագործվում են նաև «նախաքաղաք» և «վաղ քաղաք» հասկացությունները: Շենգավիթյան մշակույթի մի շարք հուշարձաններում փաստագրված մոնումենտալ առաջին կառույցները (ամրոցաշինություն՝ Գյոյ-թեփե, Յանիք թեփե, Մոխրաբլուր, Գառնի, Շենգավիթ, Զյանբերդ և այլն), հասարակական շինարարական մեծածավալ շինությունները (հասարակական շտեմարաններ՝ Յանիք թեփե, Շենգավիթ, Ծաղկասար, ջրամբարներ, ամբարտակներ՝ Մոխրաբլուր), կանոնիկ փողոցները (Նորշուն թեփե, Թեփեջիք, Շենգավիթ, Ջրահովիտ, Ագարակ), երկհարկ շինությունները (Յանիք թեփե, Թփեփջիք) ցույց են տալիս, որ բնակավայրերի որոշակի խումբ, անկախ նրանից, թե ինչպես են դրանք ներկայիս ընկալումներով բնութագրվում («նախաքաղաք», «վաղ քաղաք», «քաղաք»), վերածվել էին սոցիալական ինտեգրացումն ապահովող նոր միջավայրի, որն իր հերթին վկայում է հասարակական կառուցվածքի խիստ որոշակի ձևափոխությունների մասին: Լեռնաշխարհի սոցիալական միջավայրը բնութագրող վերը հիշատակված բնակավայրերը հիմնովին տարբերվում են Միջագետքի համաժամանակյա քաղաքներից ինչպես չափսերով ու բնակչության թվով, այնպես էլ ձևավորման պատմությամբ: «Քաղաքային հեղափոխության» առաջին ալիքը Միջագետքի հարավում տեսանելի է մ. թ. ա. III հազարամյակի առաջին կեսում: Այս փուլում կտրուկ նվազում է բնակավայրերի թիվը, բայց դրան զուգընթաց ընդլայնվում են առանձին բնակավայրերի չափերը: Վաղ քաղաքների խոշորացումն ընթանում էր շրջակա բնակչության ներհոսքի շնորհիվ: Այն լավ երևում է Ուրուկի օրինակով: Մինչ մ. թ. ա. IV հազարամյակի կեսերն այս շրջանում նկատվում է բնակատեղիների աննախադեպ աճ, որոնք խմբերով սփռված են Եփրատից ճյուղավորվող բնական ջրատարների հարևանությամբ: Նկատելի է նաև, որ խմբեր կազմող բնակատեղիները կուտակված են կենտրոնական դիրք գրավող և համեմատաբար խոշոր որևէ բնակատեղիի շուրջ, իսկ բնակավայրերի խմբերն իրենց հերթին հովհարաձև տեղաբաշխված են տաճարական այն համալիրի շուրջ, որը հետագայի տեքստերից հայտնի համաշումերական կարևորագույն պաշտամունքային կենտրոն Է-Անն է՝ Ուրուկի պատմական միջուկը: Բնակավայրերի տեղաբաշխման աշխարհագրական այս մոդելը մասնակի տարբերություններով տիպական էր

[20] *Տե՛ս* М. В е б е р. Избранные произведения. Пер. с нем, сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова; предисл. П. П. Гайденко. М., 1990, с. 309–329.

[21] *Տե՛ս* Ю. В. А н д р е е в. Островные поселения эгейского мира в эпоху бронзы. Л., 1989, с. 10–11.

ողջ հարավային Միջագետքի համար: Մ. թ. ա. IV հազարամյակի վերջերից բնակատեղիների թիվն աստիճանաբար սկսում է նվազել, բայց ընդլայնվում և բազմամարդ են դառնում պաշտամունքային կենտրոնի շուրջ գտնվողները: «Գյուղաբնակ» բնակչության այս շարժը հանգեցրեց քաղաքի անմիջական ազդեցության գոտիների ձևավորմանը (10–12 կմ շառավղով), որոնք զուրկ էին բնակավայրերից: Ձևավորվում են նաև «ոչ անմիջական ազդեցության» գոտիներ (15–30 կմ հեռավորությամբ շառավղով), որոնցում հանդիպում են հատուկենտ մանր բնակավայրեր: Տարածքի կառուցվածքային կազմակերպման (բնակեցման և յուրացման) այս համակարգը, որը ոչ առանց հիմքի կարելի է անվանել «միջագետքյան սինոյկիզմ», վերջնականապես ձևավորվելով վաղդինաստիական I փուլում՝ մ. թ. ա. 2900–2700 թթ., իր կնիքը պետք է թողներ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական հետագա զարգացումների վրա: Եվ այդ զարգացումների հիմնական ուղին այն էր, որ քաղաքները ձևավորվեցին հնագույն տաճարների շուրջ՝ ռոռգելի երկրագործության դոմինանտության պայմաններում: Ասվածի լավագույն վկայությունն ունենք Միջագետքի պատմության կարևորագույն սկզբնաղբյուրներից մեկում, այսպես կոչված, «շումերական արքայացանկում»: Այստեղ Ուրուկի I հարստության կիսաառասպելական արքաներից առաջինը՝ Մեսքիանգգաշերը հիշատակված է որպես ՈՒրուկի պաշտամունքային կենտրոն Է-Անի կառավարիչ (Էն): Սրան հաջորդում է որդին՝ Էնմերքարը, որն արդեն հանդես է գալիս որպես Ուրուկը կառուցող արքա: Այսպիսով՝ թե՛ հնագիտական դիտարկումները, թե՛ շումերական սկզբնաղբյուրները հաստատագրում են, որ պաշտամունքային կառույցը, տաճարը միջագետքյան հասարակությունների համար հանդես է գալիս որպես sui generis, որպես սոցիալ-ինտեգրատիվ գործընթացների միջուկ՝ ապահովելով ռոռգելի երկրագործության գերակայությամբ կենսապահովման համակարգի կառուցվածքային ամբողջականությունը:

Հայկական լեռնաշխարհում պատկերը բոլորովին այլ է: Այստեղ Միջագետքին բնորոշ տաճարական կառույցների որևէ փաստ չի արձանագրվում: Բնականաբար, քաղաքակրթության նախաշեմին գտնվող կամ քաղաքակրթության «հորձանուտի» մեջ քաշված հասարակությունների մասին խոսելիս դժվար է պատկերացնել այնպիսի բնակատեղիներ, որոնք զուրկ լինեին հանրության ծիսապաշտամունքային կարիքները բավարարող առարկայական դրսևորումներից: Սակայն պատմական փորձը ցույց է տալիս, որ շատ ավելի մեծ թիվ են կազմում այն հանրությունները, որոնցում տիրապետող են ծեսի՝ սոցիումի մեջ տարրալուծված «շարժական» (պորտատիվ»)[22] առարկայական դրսևորումները: Նման հանրության մասին վկայող դասական օրինակ է կուր-արաքսյան մշակութային ընդհանրությունը: Չնայած որ մշակութային այս ընդհանրության առանձին հուշարձաններում արձանագրվել են հանրային կարիքների համար նախատեսված սրբարաններ(Մոխրաբլուր, Ջրահովիտ), ակնհայտ է, որ դրանք համադրելի չեն միջագետքյան տաճարների հետ:Միաժամանակ՝ բնակելի համալիրներում

[22] *Բնորոշումը և տերմինաբանությունը տե՛ս* A. L e r o i – G o u r h a n. Les religions de la préhistoire: Paléolithique. Paris, 1964, pp. 77–152.

սրբարանների, ծիսական օջախների կանոնիկ դրսևորումները, «շարժական ծիսական օջախների» աննախադեպ մեծ քանակն ու դոմինանտությունը կասկած չեն թողնում, որ վաղբրոնզեդարյան այս հանրության ծիսապաշտամունքային հասարակական պահանջմունքները հիմնականում իրացվել են անհատականացված մակարդակում՝ ընտանիքում կամ ընտանիքների փոքր խմբերում: Սրա հետ մեկտեղ արձանագրվել են հանրային կարիքների համար նախատեսված ծիսապաշտամունքային կոթողային կառույցներ՝ ժայռափոր կերտվածքների ընդարձակ համալիրներ (Մեծամոր, Ագարակ, Բյուրական, Ապարան III, Հառիճ և այլն): Վերջիններս հանդես են գալիս որպես լանդշաֆտի «սրբազնացման» օրինակներ և դեպի դուրս ուղղված՝ էքստրովերտային բնույթով չկապվելով բուն ուրբանիստական գործընթացների հետ, ըստ ամենայնի՝ սոցիալական ինտեգրացիայի կարևոր գործոն են եղել:

Լեռնաշխարհի սոցիալական միջավայրի բարդվածության մասին վկայող բերված դիտարկումները թույլ են տալիս խոսելու վաղ բրոնզի դարում կոմպլեքսային հասարակությունների կայացման մի մեծ փուլի մասին, որը բնութագրվում է.

աշխատանքի հասարակական բաժանման և վերակարգված նահապետական հասարակական կառուցվածքի առկայությամբ,

արտաքին առևտրական և էքսպանսիոն ակտիվությամբ («արտաքին աշխարհն» իր մեջ ներառելու, ինտեգրացնելու ակնհայտ միտումներով),

բնակավայրերի կենտրոն-արբանյակներ համակարգով՝ կենսատարածքի և սոցիալական լանդշաֆտի կազմակերպման գերիշխող ձևի անփոփոխ ավանդությամբ (ներքին ինտեգրացիան պահպանելու և ապահովելու ակնհայտ միտումներով):

ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ ТРАНСФОРМАЦИИ ПАЛЕОКУЛЬТУРНОЙ СРЕДЫ АРМЯНСКОГО НАГОРЬЯ В ЭПОХУ РАННЕЙ БРОНЗЫ

ПАВЕЛ АВЕТИСЯН

Резюме

Сравнительный анализ признаков и данных археологических культур Армянского нагорья позволяет выделить такую динамику формирования и трансформаций археологических реалий, которая выражается в строго определенных периодах интеграции и трансформации культурной среды, что, в свою очередь, позволяет выделить отдельные периоды социально-культурного развития. В панораме социальной эволюции Армянского нагорья особое место занимает Шенгавитская культура (примерно середина IV тыс. до н. э.– середина III тыс. до н. э.). Характеризующие Шенгавитскую культуру данные свидетельствуют об усложненности функциональных структур и иерархических ступеней «социального ландшафта» древнейшей Армении. Имея в виду указанные обстоятельства, можно констатировать наличие в середине IV тыс. до н. э.– середине III тыс. до н. э. комплексного общества, которое, в целом, характеризуется:

– Наличием общественного разделения труда и стратифицированного патриархального общественного строя.

– Внешнеторговой активностью и экспансией (с явными тенденциями вобрать, интегрировать в себя «внешний мир»).

– Неизменной традицией преобладающей формы организации жизненной среды и социального ландшафта с населенными пунктами системы центр–спутник (с явным тяготением к сохранению и обеспечению внутренней интеграции).

THE MAIN TENDENCES OF TRANSFORMATION OF THE ANCIENT CULTURAL ENVIRONMENT OF THE ARMENIAN HIGHLAND DURING THE EARLY BRONZE AGE

PAVEL AVETISSYAN

S u m m a r y

Comparative analysis of corresponding data on characteristic traits of archaeological cultures to be mapped within the limits of the Armenian Highland allows us to single out such kind of dynamics of formation and transformation of archeological realities which can be expressed in well-defined periods of integration and transformation of cultural environment, which, in their turn, allow periodizing the process of socio-cultural development. Within the “social evolution” process of ancient Armenia a special place can be attributed to the period of formation and development of the Shengavit culture (ca. mid 4th – mid 3rd millennia B.C.). The present data on Shengavit culture witness structural complexity and hierarchic levels of the ancient population of Armenia. This circumstance allows us to speak about a complex society characterized by:

– socialdivision of labor and hierarchic patriarchal social order,

– foreign-trade and expansive activities (with distinct tendency to absorb or integrate the “external world”),

– tradition of the centre and satellite settlement system as well as unchangeable traditions of organization of habitat and social landscape (with distinct intention to preserve and guarantee the inner integration).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ – ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

I

Պավել Ավետիսյան – Հայկական լեռնաշխարհի հնամշակութային միջավայրի ձևափոխումների հիմնական միտումները վաղ բրոնզի դարում …….…….3
Ալիտա Դոլուխանյան – Անանիա Շիրակացին մանկավարժ (ծննդյան 1400-ամյակի առթիվ) ..…….……..…..20
Ռոբերտ Բաղդասարյան – Սայաթ-Նովան ռուսաստանյան գրական իրականության մեջ (հայ մեծ բանաստեղծ-աշուղի 300-ամյակի առթիվ) (ռուս.) …….…..…27
Ալբերտ Խառատյան – Հումանիզմը և հասարակության բարեշրջումը Մատթեոս Մամուրյանի փիլիսոփայական հայացքներում ……...……..…38
Գայանե Մախմուրյան – 1918 թ. Բրեստի հաշտությունը ժամանակակիցների և հայ պատմագրության գնահատմամբ (ռուս.) ……...…….……..…..46
Ռուբեն Սահակյան – Գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյան (կենսագրության անհայտ էջեր) ……..……..63
Արմեն Հովսեփյան – Վահան Տոտոմյանցի կյանքն ու գործունեությունը (ռուս.) .....…..75

ՀՈԴՎԱԾՆԵՐ – ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

II

Արծվի Բախչինյան – Հայ բալետային արվեստի նախապատմությունից ……...…...96
Հովիկ Այվազյան – Քրիստոնեության և ավետարանական պատգամների արձագանքը Թումանյանի պոեզիայում ……...……...114
Հայկ Մարտիրոսյան – Հովհ. Քաջազնունու գործունեությունը Բաքվում (1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ) ……..…..130
Էսթեր Խեմչյան – Տավուշի բանահավաքչության պատմությունից ……...……....139
Վրեժ Վարդանյան – Ս. Էջմիածնի ընդհանրական աթոռի և Աղթամարի կաթողիկոսության հարաբերությունների շուրջ (XII դ. – XIX դարավերջ) ……..…155
Նազիկ Հովհաննիսյան – Գրաբարի տպագիր բառարաններում չվկայված բառեր (ձեռագիր բառարանների նյութի հիման վրա) …….……....170
Սոնա Գրիգորյան – Գրիգոր Ղափանցյանը ուրարտագետ …….……..…..181
Գարեգին Թումանյան – «Վարդգես մանկան» վիպական պատառիկի նոր մեկնաբանություն ……..……198
Տիգրան Գևորգյան – Առանի մարզպանության ձևավորումն ու հայկական Արցախ և Ուտիք աշխարհների միացումը նրան (ռուս.) …….……210

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Նորայր Պողոսյան – Վաղ աշխարհաբարի իմաստափոխության դասակարգման նոր փորձ …….……227

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անուշավան Զաքարյան – Մանուկ Աբեղյանի ուշագրավ հոդվածաշարը ……..……240

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամատունի Վիրաբյան – Հայաստանը ԱՄՆ Պետական դեպարտամենտի 1917–1920 թթ. փաստաթղթերում ……..…..……246
Ռոբերտ Բաղդասարյան – Անուշավան Զաքարյան. Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում (ռուս.) ……251
Աննա Ասատրյան – Նազենիկ Սարգսյան. Աշոտ Ասատուրյանը XX դարի վերջին երեսնամյակի խորեոգրաֆ 256

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

Հինգ տարի անց... («Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր Ս. Հարությունյանի հարցազրույցը ակադեմիկոս Համլետ Գևորգյանի հետ՝ նրա ծննդյան 85-ամյակի առթիվ) ……..259
Սարգիս Ս. Հարությունյան, Լիլիա Մաշինյան – Ճարտարապետ գիտնական-մանկավարժը (Գառնիկ Շախկյանի 75 տարին) ……..…….267

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Նորայր Սարուխանյան – Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի կյանքը և պատմագիտական ժառանգությունը (ծննդյան 125-ամյակի առթիվ) ……..…271
Աելիտա Դոլուխանյան – Եզակի միջնադարագետը (Ասատուր Մնացականյանի 100-ամյա հոբելյանին) ……277
Ռուբեն Սաքապետոյան – Պրոֆեսոր Աշոտ Սուքիասյանի հիշատակին …….…..…..282

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Ինեսսա Ավագիմովա – Գիտաժողով՝ նվիրված Առնո Բաբաջանյանի 90-ամյա հոբելյանին ……284
Գայանե Բաղալյան – Միջազգային գիտաժողով՝ «Հայկազունիներ. առասպել և պատմություն»……..……..287
Վալենտին Խաչատրյան – «Ջահուկյանական ընթերցումներ» ..……..……..……292
Մարգարիտա Քամալյան – Սայաթ-Նովայի 300-ամյա հոբելյանին նվիրված գիտական նստաշրջան ……...…...296

ԼՐԱՏՈՒ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյան՝ գիտնական, մարդ-քաղաքացի ……..…300
Ասան Դերբոյան – Վաստակաշատ գիտնականը (Կարլենե Չաչանիի հիշատակին) ……..……..302

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ – СООБЩЕНИЯ

I

Павел Аветисян – Основные тенденции трансформации палеокультурной среды Армянского нагорья в эпоху ранней бронзы 3

Аэлита Долуханян – Анания Ширакаци – педагог (к 1400-летию со дня рождения)…….....20

Роберт Багдасарян – Саят-Нова в российской литературной действительнос- ти (к 300-летию великого армянского поэта – ашуга) (на русском языке) ……..27

Альберт Харатян – Гуманизм и эволюция общества в философских взглядах Маттеоса Мамуряна……38

Гаянэ Махмурян – Брестский мир 1918 г. в оценке современников и армянской историографии (на русском языке) …….…..……46

Рубен Саакян – Генерал-лейтенант Мовсес Силикян (неизвестные страницы биографии) ……..…..63

Армен Овсепян – Жизнь и деятельность Ваана Тотомянца (на русском языке) ……..75

СТАТЬИ – СООБЩЕНИЯ

II

Арцви Бахчинян – Из предыстории искусства армянского балета ……96

Овик Айвазян – Отклики христианских и библейских заповедей в поэзии Туманяна …….…….114

Гайк Мартиросян – Деятельность Ов. Качазнуни в Баку (в период армяно-татарских столкновений в 1905 г.) …130

Эстер Хемчян – Из истории собирания тавушского фольклора ……..…..…139

Вреж Варданян – Об отношениях Св. Эчмиадзинского католикосата всех армян и Ахтамарского престола (XII в. – конец XIX в.) ……..…..…155

Назик Оганесян – Слова, незасвидетельствованные в печатных словарях древнеармянского языка (на материале рукописных словарей) ……..…..170

Сона Григорян – Григор Капанцян – урартолог ……181

Гарегин Туманян – Новая интерпретация фрагмента легенды о «Вардкесе мануке» …….……198

Тигран Геворгян – Формирование марзпанства Аран и включение в его состав армянских областей Арцах и Утик (на русском языке) ……..….210

ОБСУЖДЕНИЯ

Норайр Погосян – Новая попытка классификации семантических изменений в новоармянском языке ……227

ПУБЛИКАЦИИ

Анушаван Закарян – Заслуживающий внимания цикл статей Манука Абегяна ……..……240

РЕЦЕНЗИИ

Аматуни Вирабян – Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг. ……..…246

Роберт Багдасарян – Анушаван Закарян. Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (на русском языке) ……...……251

Анна Асатрян – Назеник Саргсян. Ашот Асатурян – хореограф последней трети XX века……....256

НАШИ ЮБИЛЯРЫ

Пять лет спустя… (интервью главного редактора «Историко-филологического журнала» С. Арутюняна с академиком Гамлетом Геворкяном в связи с 85-летием со дня его рождения) 259

Саркис С. Арутюнян, Лилия Машинян – Архитектор, ученый – педагог (75-летие Гарника Шахкяна) 267

НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

Норайр Саруханян – Жизнь и историографическое наследие академика Ашота Иоаннисяна (к 125-летию со дня рождения) 271

Аэлита Долуханян – Уникальный медиевист (к 100-летнему юбилею Асатура Мнацаканяна) 277

Рубен Сакапетоян – Памяти профессора Ашота Сукиасяна 282

НАУЧНАЯ ЖИЗНЬ

Инесса Авагимова – Научная сессия, посвященная 90-летнему юбилею Арно Бабаджаняна 284

Гаяне Бадалян – Международная конференция – «Айказиды: мифы и история» 287

Валентин Хачатрян – «Джаукяновские чтения» 292

Маргарита Камалян – Научная сессия, посвященная 300-летнему юбилею Саят-Новы ……296

ХРОНИКА

Академик НАН РА Владимир Ходжабекян – ученый, человек, гражданин ……300

Асан Дербоян – Заслуженный ученый (памяти Карлене Чачани) ……..……302

CONTENTS

ARTICLES – REPORTS

I

Pavel Avetissyan – The Main Tendencies of Transformation of the Ancient Cultural Environment of the Armenian Highland during the Early Bronze Age 3
Aelita Dolukhanyan – Anania Shirakatsi as a Pedagogue (to the 1400th birth anniversary) 20
Robert Baghdassaryan – Sayat-Nova in the Reality of Russian Literature (to great Armenian poet-ashugh's 300th anniversary) (in Russian) 27
Albert Kharatyan – Humanism and the Society's Evolution in the Philosophical Views of Matteos Mamuryan 38
Gayane Makhmourian – Evaluation of the 1918 Brest Treaty by Contemporaries and by the Armenian Historiography (in Russian) 46
Ruben Sahakyan – Lieutenant-General Movses Silikyan (unknown pages of biography) …….....63
Armen Hovsepyan – Life and Activity of Vahan Totomyants (in Russian) 75

ARTICLES – REPORTS

II

Artsvi Bakhchinyan – From the Pre-history of the Art of Armenian Ballet 96
Hovik Ayvazyan – The Reflection of Christian and Gospel Commandments in Toumanyan's Poetry……..114
Hayk Martirossyan – Hovh. Kajaznuni's Activity in Baku (during Armenian-Tatar clashes in 1905) …….....130
Esther Khemchyan – From the History of Tavush Folklore Collection 139
Vrezh Vardanyan – On the Relations between the Catholicosate of All Armenians of St. Etchmiadzin and the Throne of Akhtamar (the 12th c. – the end of the 19th c.) 155
Nazik Hovhannissyan – Words Untestified in the Printed Dictionaries of Grabar (on the material of manuscript dictionaries) 170
Sona Grigoryan – Grigor Ghapantsyan as an Urartologist 181
Garegin Toumanyan – A New Interpretation of a Fragment of the Legend about "Vardges Manouk"…….....198
Tigran Gevorgyan – The Generation of Marzpanutyun of Aran and the Unification of Armenian States Artsakh and Utik with It (in Russian) 210

DISCUSSIONS

Norayr Poghossyan – A New Attempt of Classification of Semantic Metamorphosis in Early Modern Armenian Language 227

PUBLICATIONS

Anushavan Zakaryan – Manouk Abeghyan's Series of Articles Worthy of Attention 240

BOOK REVIEWS

Amatuni Virabyan – Armenia in the Documents of State Department of the USA in 1917–1920 …….…246
Robert Baghdassaryan – Anushavan Zakaryan. Sergey Gorodetsky in Western Armenia and Transcaucasus (in Russian) 251
Anna Assatryan – Nazenik Sargsyan. Ashot Assaturyan as a Choreographer of the Last 30s of the 20th Century 256

OUR JUBILEES

Five Years Later... (the interview of the editor-in-chief of "Historical-Philological Journal" S. Harutyunyan with academician Hamlet Gevorgyan in connection with his 85th birth anniversary) 259
Sargis S. Harutyunyan, Lilia Mashinyan – Architect, Scientist – Pedagogue (Gagik Shakhkyan's 75th anniversary) 267

OUR HONOURED SCHOLARS

Norayr Sarukhanyan – Academician Ashot Hovhannissyan's Life and Historiographical Heritage (to the 125th birth anniversary) 271
Aelita Dolukhanyan – The Unique Mediaevalist (to Assatour Mnatsakanyan's 100th jubilee) ……..277
Ruben Sakapetoyan – In Memory of Professor Ashot Soukiassyan 282

SCIENTIFIC LIFE

Inessa Avagimova – Scientific Session on Arno Babajanyan's 90th Jubilee 284
Gayane Badalyan – International Conference "Haikazuns: myth and history" 287
Valentin Khachatryan – "The Jahoukyan Readings" 292
Margarita Kamalyan – Scientific Session on Sayat-Nova's 300th Jubilee 296

NEWS

Academician of NAS RA Vladimir Khojabekyan. Scientist, Man, Citizen 300
Asan Derboyan – Distinguished Scientist (in memory of Karlene Chachani) 302

ՀԱՆԴԵՍԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՔ ՀԱՄԱՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ՝ 100 ԱՄՆ ԴՈԼԱՐ
(ՆԵՐԱՌՅԱԼ ԵՐԵՔ ՀԱՄԱՐԻ ՓՈՍՏԱՅԻՆ ԱՌԱՔՄԱՆ ԾԱԽՍԸ)

«Պատմաբանասիրական հանդեսը» վաճառվում է
Երևանի գրախանութներում

Վերստուգող սրբագրիչ՝ Գայանե Բաղալյան
Համակարգչային շարվածքը և էջադրումը՝ Շուշան Բասենցյանի

Խմբագրության հասցեն՝ 375019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. 581872
Адрес редакции: 375019, Ереван-19, пр. Маршала Баграмяна, 24 г, тел. 581872
Address: 24G Marshal Baghramian av., 375019, Yerevan, Armenia, tel. 581872
E-MAIL: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

Հրատ. պատվեր № 390
Ստորագրված է տպագրության 14.09.2012 թ.:
Տպագրական 19 մամուլ: Թուղթ № 1, 70x100:

ՀՀ ԳԱԱ տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Изд. заказ № 390
Подписано к печати 14.09.2012 г.
Печ. 19 л. Бумага № 1, 70x100.

Типография НАН РА, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.